

For U.K. U.

განმარტებული კომპლექტი

63 (47)
დ - 33

04 AUG 2010

№ 10 ՊԱՏԱՆՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 10

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Բ. Ն. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ ՅԵՎ Ս. Ն. ԶՅՈՒԲԻՆՍԿԻՅ

Խ. Ս. Հ. Մ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԹԱՐԿՄ. Ա. ՍՏԱՄԲՈԼՅԱՆ

•••••

63(47)  
Ժ-33

ՏՈՒՆ ԿՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ - ՅԵՐԵՎԱՆ - 1926

491

25.04.2013

№ 10 Պ Ա Տ Ա Ն Ո Ւ Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն № 10

63(97) ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՕՇԵՐԻԱ  
Ժ-33 28-


Բ. Ն. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ ՅԵՎ Ս. Ն. ԶՅՈՒԲԻՆՍԿԻՅ

13031

Խ. Ս. Ն. Ս.

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. Ս. ՍՅՍՄԻՆՍԿԻՆ



15006

Խ. Ս. Ն. Մ.-ի ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Ուսումնասիր-  
ուելիան ծրա-  
գիրք. Մենք այստեղ պետք է խոսենք վոչ թե  
տեղական շրջանի, գավառի, այլ ամբողջ Խոր-  
հրդալի Միության գյուղատնտեսության  
վիճակի մասին: Գլխավոր ուշադրություն պետք է դարձնենք  
այն հանգամանքի վրա, թե ինչն է յե յեա մեր գյուղացին,  
պատճառն ինչ է, վոր լուսավոր յերկրի գյուղացիությունը վատ  
հողից լավ բերք է ստանում:

Կարիք չկա, վոր մեր դրությունը նկարագրենք վարդա  
գույն գույներով: Իրողությունը պետք է ճիշտ պատկերացնել  
և միայն այդ դեպքում կարելի յե ուղղել մեր թերությունները:  
Իսկ այդ թերություններն են՝ կենդանի և մեռյալ ինվենտարի  
(անասունների, յերկրագործական գործիքների) պակասը, ցածր  
բերքատվությունը, ցանքսերի կրճատումը իմպերիալիստական  
և քաղաքացիական կռիվների ընթացքում: Իրան պետք է ավե-  
լացնել և այն, վոր մեզնում համարյա վոչինչ չի արվում տըն-  
տեսությունը յերաշտից ապահովելու համար, վորպեսզի չկրկնվեն  
սովի այնպիսի տարիներ, ինչպիսին եր 1921—22 թ. թ.:

Սակայն մենք չենք կարող աչքաթող անել այն հանգա-  
մանքը, թե ինչպես մյուս յերկրներում ել համաշխարհային  
պատերազմն ու վերջին տարիների դեպքերը գյուղատնտեսու-  
թյան մեջ ճգնաժամ առաջացրին, յերեբեցին, բալբայեցին նրա  
ուժերն ու զրկեցին նրան կայունությունից:

Մենք կանգ կառնենք այն պատճառների վրա, վորոնք  
նախապատրաստեցին և բայբայման հասցրին Խ. Միության  
գյուղատնտեսությունը: Իրա գլխավոր պատճառները հետեյալ-  
ներն են. 1) կալվածատերերի և կապիտալիստների կողմից

գյուղացիութեան անխնա շահագործումը ցարիզմի ժամանակ.  
2) մասնատութիւն (чересполовица). 3) յեռգաշտյան սիստեմը.  
4) սակավահողութիւնը. 5) գյուղացիների կուլտուրական ցածր  
մակարդակը. 6) իմպերիալիստական պատերազմը. 7) քաղաք-  
քացիական կռիւները. 8) այն, վոր քաղաքացիական և իմպե-  
րիալիստական կռիւների ժամանակ գործարանային արդյու-  
նաբերութիւնը գլխավորապես ծառայում էր զինվորական  
պետքերին, իսկ քաղաքացիական կռիւների ժամանակ քաղաքի  
տնտեսութիւնը վոչ մի կապ չունէր գյուղի տնտեսութեան  
հետ. 9) Սորհրդային Միութեան տնտեսական բրկադան կապի-  
տալիստական պետութիւնների կողմից:

Թվերը, վոր բերում ենք այստեղ, վերաբերում են գլխա-  
վորապես այսպես կոչված ՆեՊ-ի, նոր տնտեսական քաղաքա-  
կանութեան շրջանին և ցույց են տալիս, թե ինչ աստիճան  
ՆեՊ-ն ոգտակար կամ վնասակար յեղավ մեր գյուղացիութեան  
և առհասարակ ժողովրդական տնտեսութեան զարգացման համար:

Ս. Գ. ԱՆՆՈՒՆՆԵՐԻ  
ԿՐԵՏՈՒՄԸ. Առաջին խնդիրը, վորի վրա ուշադրութիւն  
վրա դարձնել, դա անասունների ընդհանուր  
թվի կրճատումն է: Այսպես, ըստ համառուտական գյուղացիական  
ցուցահանգեսի տվյալների, լծկան անասունների (ձիերի, չեղ-  
ների) թիվը մեկ և կես անգամ պակաս էր 1916 թվի քանակից:

Նման և նույնիսկ ավելի կրճատում տեղի չէ ունեցել նաև  
անասունների մյուս տեսակների նկատմամբ: Այնտեղ, ուր 1916թ.  
100 գլուխ անասուն կար, 1922 թվին մնացել էր՝ ձի — 60 գլուխ,  
խոշոր յեղջերավոր անասուն — 63, վոչխար և այծ — 39, խոզ — 50  
(կենտրոնական Վիճակագրական վարչութեան տվյալներով):

Իհարկէ, բոլոր վայրերը միատեսակ չեն տուժել: Յեթե  
վերցնենք, որինակ, Արտայի նահանգը, կտեսնենք, վոր թեև այն-  
տեղ էլ կորուստ է յեղել, բայց վոչ այն չափով, ինչ վոր Ռու-  
սաստանի. ներքին յերկրագործական վայրերում, ինչպես, որի-  
նակ, Տամբովի նահանգում: Այս նահանգները հաճախակի մո-  
բիլիզացիաներից, անասունների բռնագրավումներից անհամե-  
մատ ավելի շատ են տուժել: Այս նահանգները քաղաքացիական  
կռիւների ժամանակ հաճախակի ձեռք-ձեռք ելին անցնում  
կարմիրների և սպիտակների միջև: Հետո վրա հասավ սովը և

պակասը լրացրեց. շատ վայրեր այնպես են տուժել, վոր գյու-  
ղացին ինքն էր քաշում արորը: Շատ գյուղերում մինչև որս էլ  
կոպերով են վար անում:

Առանձնապես կրճատվել են մատղաշ անասունները. ձիու  
կրճատումը հասնում է մի յերրորդի, իսկ խոշոր չեղջերավոր  
անասուններինը՝ 45%: 1921—22 թ. թ. սովի տարիներն ավելի  
ևս կրճատեցին անասունների քանակը: Այսպես, որինակ, 1923 թ.  
Տամբովի նահանգի 320 ծուխ ունեցող Բոգդանովո գյուղում  
մնացել էր միայն 26 ձի:

Ս. Գ. ԱՆՆՈՒՆՆԵՐԻ  
ԿՐԵՏՈՒՄԸ. Բայց բանը միայն քանակը չի, այլև վո-  
րակը: Այս տարիներում վատացել է նաև  
սուբյա 6 մեջ. անասունների վորակը: Այսպես՝ որսվյան ըն-  
տիր ցեղի ձիերից մնացել էր 1914 թ. քանակի մեկ տասնհինգ-  
յերրորդականը. նույնը և վորոնեժյան բիտուկների վերաբերյալ  
(ծանրատար ձիերի): Իսկ նրբամազ վոչխարների (մերինոսների)  
քանակը կրճատվել էր 25 անգամ:

Անասունների այսպիսի նվազումը պատճառ յեղավ շատ  
վայրերի գյուղատնտեսութեան խիստ կրճատման. գյուղացի-  
ներն անասուն չունեցին աշխատելու համար: Իսկ յեթե հաշվի  
առնենք և այն հանգամանքը, վոր գյուղացիների մեծ մասը,  
բացի աղբից, արհեստական պարարտացում չի գործադրում,  
ապա պարզ կլինի շատ վայրերի գյուղատնտեսութեան վատ  
վիճակը: Մեզ մոտ համարյա գոյութիւն չունի գյուղատնտեսու-  
թեան մեքենացում (տրակտորներ, ինքնաշարժեր). Մեր տրակ-  
տորները շատ տեղերում դեռ չեղներն ու ձիերն են: Իսկ զրան-  
ցից ստացած պարարտացման նյութն ինչ պետք է լինի: Ինչ-  
քան քիչ լինեն անասունները, այնքան էլ վատ կլինի պարար-  
տացումը: Ինչքան վատ լինի պարարտացումը, այնքան էլ պա-  
կաս կլինի բերքը:

Ս. Գ. ԱՆՆՈՒՆՆԵՐԻ  
ԿՐԵՏՈՒՄԸ. Անվիճելի յե, վոր պատերազմի ժամանակ  
և հեղափոխութեան առաջին տարիներում  
անասնապահութիւնը կրճատվել է: Իսկ պատե-  
րագմից առաջ — ինչից էր նեղվում մեր գյու-  
ղացիութիւնը. գլխավորապես սակավահողութիւնից և անա-

սուճները չունենալուց: Այնքան քիչ էյին անասունները, վոր հողը անհրաժեշտ պարարտանյութերի մի յոթերորդ մասն էր մրայն ստանում: Դրանից ել հողը տարեցտարի ուժասպառվում էր: Յանքսերը խլում էյին հողի բոլոր նյութերը, վորի փոխարեն հողը վոչինչ չեր ստանում, չեր պարարտացվում:

Պատերազմից առաջ մեր ժողովուրդն անասուններով անհամեմատ ավելի վատ էր ապահովված, քան Ամերիկան կամ Ախտրալիան. Ռուսաստանն ավելի քիչ անասուններ ուներ, քան մյուս յերկրները (միայն մեր յերկիրն ավելի ծի ուներ, քան Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան, վորովհետև Ռուսաստանում համարյա միակ աշխատող կենդանին ձին է): Յեթե համեմատենք հողի և անասունների քանակը, ապա կտեսնենք, վոր միևնույն քանակի հողին մեզանում բնկնում է 10, 15 անգամ պակաս անասուն, քան Արևմտյան Յեվրոպայի յերկրներում: Դրան պետք է ավելացնել նաև մեր շատ վայրերի անասունների ցածր վորակը (թեև մենք ել ունենք անասունների լավ ցեղեր, վորոնք շատ ավելի ձեռնտու յեն մեր տեղերին, քան արտասահմանի լավագույն ցեղերը): Հետո, պետք է ինկատի ունենալ մեր մտացու խոշոր յեղջերավոր անասունների ցածր քաղը: Միջին հաշվով մեր անասունի քաղը 7—18 փուլ է, իսկ Միացյալ Նահանգներում—30 փուլ, Ֆրանսիայում՝ 20—30 փուլ:

Անասնապահությունն այնպիսի խոշոր դեր է կատարում, այնպիսի մեծ նշանակություն ունի մեր գյուղատնտեսության մեջ, վոր նրա հետագա հաստատուն վերականգնումը հնարավոր կդառնա այն դեպքում միայն, յեթե միաժամանակ ուշագրություն դարձի ինչպես դաշտաբուծության, նույնպես և անասնաբուծության վրա:

Յեկրագործական մեռյալ ինվեստի կրճատման շրջանի յերկամյա արտադրությանը: Իսկ յեթե վերցնենք վերջին ութ տարիները (1916-ից մինչև 1923 թ.), կստանանք

1920 թ. ընդհանուր բերքը հավասար էր մոտ 2,800 000 հաղ. փ.	
1921 »	» 1,800,000 »
1922 »	» 2 900 000 »
1923 »	» 3,000 000 »

Այս նշանակում է, վոր ամբողջ Միության մեջ 1921 թվին մինչպատերազմյան բերքի միայն 40% է հավաքվել, իսկ 1923 թվին—67%: Բացի այս բոլորից պետք է նկատի առնել, վոր պատերազմից և հեղափոխությունից հետո (մինչև ՆեՊ. բ. 1921 թ.) զգալիորեն կրճատվեցին բանջարաբուծությունը, այգեգործությունը, կաթնատնտեսությունը, խոզաբուծությունը, թռչնաբուծությունը և այլ գյուղատնտեսական ձեռնտու ճյուղեր: Պատերազմից առաջ գյուղատնտեսությունը շուկա չեր հանում մոտ 2 միլիարդ ուրբուլ մթերք, այսինքն գյուղատնտեսության ամբողջ արտադրության մոտ 37%: 1920 և 21 թ. գյուղատնտեսությունը շուկա չե հանել և պարենտուրք է մուծել ընդամենը 867 միլ. ուրբուլ մթերք: Այս ամենի հետե վանքն այն յեղավ, վոր կրճատվեց ներքին շուկան, և թուրացավ գյուղացու գնորդական ընդունակությունը: 1922 թվին գյուղատնտեսության ամեն մի շնչին ընկնող ապրանքափոխանակությունը չորս անգամ պակաս է, քան պատերազմից առաջ. և այս հանգամանքն իր հերթին նպաստել է արդյունաբերության դրության վատթարացմանը:

Գյուղական բնակչության կազմի փոփոխությունը. Հեղափոխությունից հետո գյուղական բնակչությունն ավելի հավասարվեց՝ միջակները շատացան, հարուստներն ու չքավորները պակասեցին: Սովի տարիներում և այն ժամա

նակ, յերբ արդյունաբերությունը մեզանում համարյա կանգ էր առել, քաղաքից շատերը գյուղ տեղափոխվեցին: Միայն 3 տարվա ընթացքում՝ 1917 թ. — 1920 թ. քաղաքից գյուղ են տեղափոխվել մոտ 8 միլիոն մարդ:

Գյուղատնտեսության մեջ առաջ չեկա՞ այն բոլոր փոփոխությունները, վորոնց ժասին մենք այստեղ խոսեցինք (ցանքսերի տարածության կրճատում, բերքատվության նվազում, ինվենտարի կրճատում), մինչև ՆեՊ ն ավելի ու ավելի էյին

X անա

ուժեղանում: ՆեՊ-ը բեկման կետ հանդիսացավ: ՆեՊ-ից հետո  
ավելացավ ցանքերի տարածութունը, ավելացավ ու վերա-  
նորոգվեց գյուղատնտեսական ինվենտարը, և բարձրացավ բեր-  
քատվութունը, լավացավ հողի մշակումը, մելիորացիան, ելեկ-  
տրիֆիկացիան, մուծվեց բազմազաշտյան սիստեմը, ուժեղա-  
ցավ գյուղի գնորդական ընդունակութունը, գյուղացին նորից  
սկսեց քաղաք աշխատանքի գալ, վերականգնվեց գործարանա-  
յին արդյունաբերութունը, և առհասարակ մեր ամբողջ տնտե-  
սութունն սկսեց վոտքի կանգնել:

Յերասի յե վ  
սովի պասճառ-  
ճերք.

1921 և 22 տարիների սովն անսպասելի  
չեր, յեթե հաշվի առնենք այն հանգամանքը,  
թե ինչ վիճակի մեջ եր մեր գյուղատնտեսու-  
թյունը դեռ պատերազմից առաջ: Համաճա-  
րակներ շատ են յեղել նաև առաջ: Վերջին սովն ահեղի յեր  
նրանով, վոր մեր տնտեսության քայքայումը չափազանց խոր  
և սուր եր: Պատերազմից առաջ 1883 թ. մինչև 1898 թիվը  
Ռուսաստանը վեց անգամ սով ե տեսել: 21 տարվա ընթացքում՝  
1891-մինչև 1911 թ. յերեք տարի (1891, 1906 և 1911 թ.)  
սով ե յեղել, տասներեք տարին՝ անբերրի և միայն 5 տարին  
ե յեղել բերքաշատ: Հիտևապես սովի պատճառը միայն իմպե-  
րիալիստական և քաղաքացիական կռիվները չեն: Այս կռիվները  
միայն սուր բնույթ տվին նրան: Առաջ ել տեղի յեն ունեցել  
բոլոր անասունների, յերելսանների վաճառք և նույնիսկ մարդա-  
կերության մասնակի դեպքեր, այսինքն այն, ինչ վոր ավելի  
խիստ չափով յերևան յեկավ այս վերջին սովի ժամանակ:

Իսկ վորո՞նք են այդ սովերի պատճառները: Չի կարելի  
ասել, թե մեր հողը վատն ե: Հենց այստեղ, հարավ-արևելքում,  
ուր սովն ամենից խիստ ե յեղել, հողն ամենաարգավանդն ե  
համարվում և կարող ե մեր ամբողջ յերկիրը կերակրել: Չի  
կարելի գլխավոր պատճառը համարել նաև քաղաքացիական  
կռիվները, վորովհետև, ինչպես տեսանք, պատերազմից առաջ  
ել եյին տեղի ունենում սովեր: Չի կարելի նույնպես միակ  
պատճառը համարել անձրևների բացակայութունը: Յեթե  
ունենալինք արհեստական ջրամբարներ՝ ջուր հավաքելու և

ավելի քիչ, քան մինչպատերազմյան միամյա արտադրութունը:  
1919 թվին այնպիսի դրութուն եր ստեղծվել, վոր 100  
մեքենա-գործիքի փոխարեն արտադրվում եր 1 կամ 2 ը, 1920 թ.  
չորսից միքիչ ավելի, 1921 թվին - 6: Բայց պատերազմից առաջ  
ել միայն Ռուսաստանում պատրաստած գործիքները չեյին  
բավարարում գյուղատնտեսության կարիքները. արտասահմա-  
նից մեծ քանակությամբ գործիքներ եյին ստացվում: Այսպես՝  
պատերազմի նախորդակի վերջին տարիներում արտասահմանից  
համարյա նույնքան յերկրագործական գործիքներ են ներմուծ-  
վել, ինչքան վոր պատրաստվել ե Ռուսաստանում:

Պատերազմի ընթացքում՝ 1914 - 1917 տարիներում, մենք  
համարյա վոչ մի յերկրագործական մեքենա չենք ստացել ար-  
տասահմանից, իսկ 1917 - 1921 թ. թ. բրիտանացի շնորհիվ  
բացարձակապես վոչինչ չենք ներմուծել: Շնորհիվ յերկրա-  
գործական գործիքների արտադրության նվազման և ներմուծ-  
ման ընդհատումի գյուղատնտեսությունը ծանր դրության մեջ  
ընկավ. յեղած գործիքները մաշվել եյին, նորերը քիչ եյին:  
1922 թ. մեր յերկրագործական ինվենտարը գնահատվում եր  
միայն 150 միլիոն ուրբի. իսկ վորպեսզի այդ ինվենտարը  
հասցնենք մինչպատերազմյան դրության, հարկավոր ե ծախ-  
մել վոչ պակաս քան 250 միլիոն ո. վոսկով:

Սրան պետք ե ավելացնել և այն, վոր  
Յերկրագործա-  
կան վաս գոր-  
ծիքներ. մեր գյուղատնտեսական տեխնիկան դեռ պա-  
տերազմից շատ առաջ ել շատ ցածր մակար-  
դակի վրա յեր. նա յեվրոպական յերկրներից յետ ե մնացել  
500 - 600 տարով: Դեռ հիմա յել տեղ-տեղ հողը մշակում են  
այնպիսի գործիքներով, ինչպիսին գործ եյին ածում 800 -  
1000 տարի առաջ: 1910 թ. վիճակագրության համաձայն վա-  
րելու բոլոր գործիքների յերկու յերրորդը կազմում եյին արոր-  
ներն ու փայտե գութանները, փայտե տափանները բոլոր  
տափանների  $\frac{3}{4}$ -ն եյին, ըստվորում դրանցից մի յերրորդը գուրկ  
եր նույնիսկ յերկաթե ատամներից:

Կենտրոնական Վիճակագրական Վարչու-  
թյան (նույնը համարյա և գյուղատնտեսական  
Կրճատումը. ցուցահանդեսի) տեղեկութուններով ցանք-  
սերի տարածութունը մեզանում կազմում եր՝

1913	թվին	86	միլ.	դեսիատին.
1921	»	57	»	»
1922	»	51	»	»
1923	»	61	»	»

Այսպիսով 1913 թվի ամեն մի 100 դեսիատին ցանքսի դիմաց 1921 թվին ունեյինք միայն 66 դեսիատին, 1922 թ.՝ 60: Մինչև պատերազմը մեր ամեն մի 100 դեսիատին հողից միայն 5-ն եր ցանվում, մնացածը համարվում եր անպետք և առհասարակ չեր ոգտագործվում յերկրագործության համար: Իսկ 1922 թվին մեր ամեն մի 100 դեսիատինից ցանված եր միայն յերեք դեսիատինը: Այժմ ցանքսի տարածությունը վերականգնվում ե և շատ նահանգներում վոչ միայն հասել ե մինչպատերազմյան նորմային, այլ և տեղ-տեղ նույնիսկ անցել ե նրանից, սակայն դեռ վորոշ տեղերում մինչև հիմա յել ցանքսերի տարածությունը շատ փոքր ե:

Պետք ե նկատել, վոր ամենից շատ կըրճատվել են ժողովրդական տնտեսության համար ամենաարժեքավոր մշակույթները, վորոնք արտադրում եյին գլխավորապես շուկայի, մեծ մասամբ արտասահմանի համար: Այսպես, որինակ, ցորենի ցանքսերի տարածությունը 1913 թվի համեմատությամբ 1921 թվին իջել եր 47%-ով, իսկ 1922 թվին՝ 28%-ով. գարու ցանքսերի տարածությունը 1921 թվին իջել եր 45%-ով, իսկ 1922 թ.՝ 25%: Ամենից շատ վնասվել եյին վուշի, բամբակի, կանեփի, շաքար-ճակնդեղի, ծխախոտի, կարտոֆիլի ցանքսերը, այսինքն այն մշակույթները, վորոնք ամենաարժեքավորն են ժողովրդական տնտեսության և ամենաարդյունավետը գյուղացու համար: Առանց այդ մշակույթների անհնար ե գարգացնել մեր սեփական մանվածային, շաքարի և այլն արդյունաբերությունը: Դրա հետ զուգընթաց կրճատված ե նաև մեր արտահանությունը, և մենք զրկվում ենք մեր գյուղացիական մթերքների փոխարեն արտասահմանից անհրաժեշտ մեքենաներ ձեռք բերելու հնարավորությունից: Բացի սրանից, միքանի մշակույթներ նպաստում եյին բերքի և անասնապահության բար-

ձրացմանը. նրանց կրճատումը զրկում եր գյուղացիներին զգալի արդյունքից, քանի վոր պատերազմից առաջ այդ տեխնիկական մշակույթները, բռնելով ցանքսերի 6% -ից վոչ ավելի տարածություն, տալիս եյին 730 միլ. ուրբու արդյունք, այսինքն գյուղատնտեսական ամբողջ արդյունքի 12% -ը:

Գաղափար տալու համար, թե վորքան ե կրճատվել մեր տնտեսության համար անհրաժեշտ մշակույթների արտահանությունը, բերում ենք միքանի թվեր: Մեր յերկիրը մշակում եր գյուղատնտեսական հում նյութեր. —

	Պատերազմից առաջ	1923 թվին.
Բամբակ	22 միլ. փութ	— 700 հազար փութ
Վուշ	26 » »	5 միլ. 500 » »
Կանեփ	22 » »	3 » — » »
Բուրդ	7,5 » »	2 » 200 » »

Մինչպատերազմյան ամեն 100 դես. ցանքսի դիմաց 1922 թվին ցանվել ե՝ շաքար-ճակնդեղ — 19 դես., ծխախոտ — 18 դ., բամբակ — 14 դ., կանեփ — 19 դես.:

Պետք ե նկատել, վոր այժմ հողը շատ վատ ե մշակվում: Գյուղացիներից շատերը չեն կարողանում հողը կարգին մշակել: Անասունները պակասել են, աղբը քչացել: Շատ աշխատավորներ պատերազմ են տարվել, բազմաթիվ վայրերում քաղաքացիական կռիվները քայքայել են տնտեսությունը: Պարենմասնատրումը (продразверстка) և ավելուրդների բռնագրավումները մեռցնում են գյուղացու մեջ հողը լավ մշակելու և շատ բերք ստանալու ձգտումը: Շատերն այսպես եյին մտածում. «Կցանեմ ենքան, ինչքան ինձ հարկավոր ե, ավելորդ ինչու ցանեմ, վոր հետո խլեն»: 1918—19 տարիներում աղբը չեյին կրում արտերը: Իսկ արհեստական պարարտացում դեռ պատերազմից առաջ ել քիչ եր գործադրվում: Համարյա դադարեցին աշնանացան անելուց: 1918—21 տարիներում դադարեցին սերմերն ընտրելուց, և այդ բոլորի հետևանքն այն յեղավ, վոր հացի բերքատվությունը պակասեց:

Բելգիայում, որինակ, մի դեսիատին հողին միջին հաշվով

տալիս են 21 փթից ավելի արհեստական պարարտանյութ, Հոլ-  
 Լանդիայում՝ 10 փթից ավելի, Գերմանիայում՝ 6 փթից ավելի,  
 իսկ Ռուսաստանում՝ 15 ֆունտից փոշ ավելի:

Պատերազմից առաջ հաճարը մի դեսիա-  
 տինից տալիս եր շուրջ 59 փութ, վարսակը՝  
 55 փութ, իսկ պատերազմից հետո և հեղափոխության ժամա-  
 նակ բերքատվությունը հետևյալ պատկերն ունենր.

	1918 թ.	1920 թ.	1921 թ.
1 դես. հաճարի	41 փ.	29 փ.	33 փ.
» » վարսակի	42 »	35 »	35 »
» » ցորենի	38 »	26 »	25 »
» » գարու	25 »	24 »	19 »

Յեթե այս թվերը համեմատենք ուրիշ յերկրների հետ,  
 ապա կտեսնենք, վոր պատերազմից առաջ մեր բերքատվու-  
 թյունը Գերմանիայից 3 անգամ պակաս եր, իսկ 1920-21  
 տարիներում արդեն 5 անգամ: Յեթե պատերազմից առաջ  
 գյուղացին մի կերպ կարողանում եր բերքատվությունը բար-  
 ձրացնել այն աստիճանի, վոր խիստ տարուբերումներ չեյին  
 լինում, ապա այս տարիներում տարուբերումները խիստ մեծ  
 են: Յեթե վերցնենք, որինակ, Գերմանիան, կտեսնենք, վոր  
 այնտեղ ամենալավ բերքը հազիվ  $1\frac{1}{2}$  անգամ ե տարբերվում  
 ամենավատ բերքից. իսկ մեզանում այդ տարբերությունը շատ  
 մեծ ե. ամենալավ տարվա բերքը  $3\frac{1}{2}$  անգամ գերազանցում  
 ե ամենավատ տարվա բերքից: Այս նշանակում ե, վոր մեր  
 գյուղացին այնպես չի կարող վստահել իր տնտեսությունը.  
 ինչպես գերմանացի գյուղացին. սա գիտե, վոր վատ բերքի  
 դեպքում տարբերություն կլինի, բայց վոչ այն աստիճան,  
 ինչպես մեզանում ե լինում:

Համառուսական գյուղատնտեսական ցու-  
 ցահանդեսի տեղեկությունների համաձայն,  
 Սորհրդային Միության այժմյան սահման-  
 ներում հացի ընդհանուր բերքը պատերազմից առաջ հաշվվում  
 եր միջին թվով տարեկան չորս և կես միլիարդ փութ, իսկ հե-  
 տագայում դա կրճատվեց այսպես.

պահելու համար, յերաշտը վտանգավոր չեր լինի: Անձրև ու  
 ձյուն այնքան ե գալիս մեզանում, վոր խնդիրը շուրջ հավա-  
 քելն ու պահելն ե՝ հողի աճեցողություն համար: Բացի սրանից՝  
 մենք այնպիսի բույսեր չենք մշակում, վոր կարողանան դի-  
 մանալ յերաշտին: Մեզանում դեռ շատ քիչ ե գործածվում  
 այսպես կոչված չոր յերկրագործությունը, վաղ հերկաթող  
 (ранний пар), շարքացան, լայնաշարք ցանքս, վաղ մանրավար  
 (հունդից անմիջապես հետո վարել 1 կամ  $1\frac{1}{2}$  վերջով խորու-  
 թյամբ. վերջինս նույն նշանակությունն ունի գարնանացանի  
 համար, ինչ վոր վաղ հերկաթողը՝ աշնանացանի համար), ան-  
 ջըրդիությունների մացող բույսերի ցանքս. կարտոֆիլ, արմա-  
 տապտուղներ, յեգիպտացորեն և այլն:

Մեր սովերի գլխավոր պատճառն այն ե, վոր մեր գյու-  
 ղացին չի վերագարձնում հողին այն, ինչ վերցնում ե նրանից:  
 Գլխավոր բաղադրիչ տարրը, վոր հատիկը վերցնում ե հողից,  
 Փոսֆորային թթվումն ե, վորից հյուսվում են բույսերի  
 բջիջները: Հողից վերցրած նյութերի մի մասը կրկին վերա-  
 դարձվում ե նրան պարարտացման միջոցով. իսկ այն, ինչ վոր  
 արտասահման ե տարվում, վոչնչով չի փոխարինվում, և հողն  
 ուժասպառ ե լինում:

Յեթե վերցնենք 20 տարվա (1893-1912 թ) ընթացքում  
 Ռուսաստանից արտահանած հացահատիկը, կտեսնենք, վոր  
 այս հացահատիկի միջոցով արտասահման ենք տարել 50 միլ.  
 փութ Փոսֆորային թթվում (այդ բոլորը հողից ենք վերցրել),  
 իսկ հողին վերագարձել ենք միայն արհեստական պարար-  
 տացման միջոցով 10 միլ. փութ: Ուրիշ յերկրներում այդպես  
 չե: Այնտեղ ել ե լինում յերաշտ, անբերրի տարի, բայց գյու-  
 ղացին վերագարձնում ե հողին այն, ինչ վոր վերցնում ե. նա  
 անասուն շատ ունի և, բացի այդ, արհեստական պարարտա-  
 նյութ ե գործադրում: Որինակ՝ Միացյալ Նահանգներում 5  
 տարվա ընթացքում (1898-1902) հացահատիկի միջոցով ար-  
 տահանված ե 32 միլիոն փութ Փոսֆորային թթվում, իսկ հողին  
 խառնել են 92 միլ. փութ արհեստական պարարտանյութ:  
 Ուրեմն հողից վերցրած կապիտալը վերագարձել են տոկոսնե-

րով: Խնդիրը, ուրեմն, լավ գործիքներն ու մեքենաները չի գեռ ավելին. քանի վոր մեր անասնապահությունը, յերկրագործական ընդհանուր մշակույթն այս վիճակումն է, թերևս ավելի ձեռնտու յե, վոր գործիքները լավը չեն և հնարավորություն չեն տալիս հողն ավելի խորը վարելու և այն ուժասպառելու: Հետզհետե ուժասպառվելով՝ հողը ժամանակ առ ժամանակ հաշիվ ե ներկայացնում գյուղացուն անբերրիության, սովի միջոցով: Նա կարծես թե հրաժարվում ե բուսցընելուց, մինչև նոր ուժ, հյութեր ամբարելու: Սովի տարիներում հողը կարծես թե հանգստանում ե, նոր ուժ հավաքում և ապա վարձատրում գյուղացուն լավ հնձով: Վոչ թե գյուղացին ե ղեկավարում իր հողաբաժինը, այլ հողն ե տոն տալիս, ղեկավարում, գերիշխում նրա վրա: Յե՛վ մեր տնտեսության ամբողջ դժվարությունն այն ե, վոր գյուղացին չի տիրապետում հողին, չի ղեկավարում նրա պտղաբերությունը:

Յեթե հին կարգերը լինեյին, գրությունը մնալու յեր նույնը. գյուղացին միքանի տարվա ընթացքում վտաքի կկանգներ, վորոշ ժամանակից հետո կրկին ահռելի սովին յենթարկվելու համար: Այժմ այդպես չի. գյուղացին հաշիվ յե առնում և անպատճառ հաշիվ կառնի այս վերջին ահռելի սովի դասերը: Այժմ հնարավորություն կա ընդհանուր ուժով, խորհուրդների միջոցով, բարելավել մեր յերկրագործությունն այնպես, վոր այլևս վոչ մի սով չսպառնա մեզ: Անբերրիություն կարող ե լինել, բայց սովն այլևս չպետք ե կրկնվի: Դեռ յերկար ժամանակ այս պետք ե լինի մեր տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրը:

Գյուղացու հասարակական օգուտը:

Միայն Ռուսաստանը, Խ. Միությունն ե տուժել պատերազմից: Իհարկե, վոչ: Մնացած պատերազմող յերկրներում ևս 1920 թվի ցանքսերի տարածությունը կազմում եր 1913 թվի միայն 79<sup>0</sup>/<sub>100</sub>: 1918 թվին այդ տարածությունը հավասար եր մինչպատերազմյանի միայն <sup>3</sup>/<sub>4</sub>-ին: Նույնպես և պակասել եր հացի բերքը. 1920 թվին նա հավասար եր 1913 թվի բերքի <sup>2</sup>/<sub>3</sub>-ին միայն: Հետևաբար, այդ յերկրներում ևս պակասել

եր ցանքսերի տարածությունը, նվազել ընդհանուր բերքը, իջել հացի բերքատվությունը: Նույնը պետք ե ասել և անասնապահության նկատմամբ: 1918 թվին խոշոր յեղջերավոր անասուններից մնացել եր մինչպատերազմյան քանակի միայն <sup>4</sup>/<sub>5</sub>-ը, իսկ խոզերից—կեսը: Ճիշտ ե, Միացյալ Նահանգներում, Արգենտինայում այդ տարիներին մինչպատերազմյանի համեմատությամբ ցանքսերի տարածությունն ավելացավ 10 տոկոսով, իսկ հացի բերքը 20 տոկոսով, բայց պատերազմից անմիջապես հետո պարզվեց, վոր այդ ավելացումը խաբուսիկ եր, և շատ մանր հողագործներ, Ֆերմերներ անանկացան: Պատերազմի ընթացքում այնտեղ չափազանց բարձրացել եյին հացի և այլ մթերքների գները, այնպես վոր, յերբ պատերազմից հետո գներն սկսեցին ընկնել, շատ գյուղական տնտեսություններ իսպառ քայքայվեցին. առանձնապես ծանր դրություն ստեղծվեց այն մանր վարձկալ ֆերմերների համար, վորոնք ընկան խոշոր կալվածատեր-հողատերի խիստ ճնշման տակ: Բայց քայվեցին նաև Գերմանիայի, Ֆրանսիայի և միջանի այլ յերկրների հարուստ տնտեսությունները: Պատերազմի ընթացքում արտասահմանյան շուկայում ուռուական հաց չկար, նրան փոխարինել եր Աճերիկայի, Կանադայի և Ավստրալիայի հացը, Բաց այդ յերկրների հացը, նախ, ավելի թանկ ե, քան ուռուական հացը, յերկրորդ՝ նրանց հացին անպատճառ պետք ե վոսկի վճարել, իսկ մենք մեր հացը փոխանակում եյինք մեքենաների և այլ անհրաժեշտ ապրանքների հետ: Ահա թե ինչու, յերբ Ռուսաստանը նորից իր հացն արտասահման արտահանի, Աճերիկայի, Կանադայի և Ավստրալիայի գյուղատնտեսության մեջ վորոշ քայքայում կսկսվի:

Ըստ ՅՄ. ՅՄ. ԳՈՒՆՏԱՎՍԿՈՒ

Խ. Ս. Շ. Մ. Ի ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Ֆանսերի օտ-  
բաժնույունը.

Ֆանսերի տարածությունը գյուղացու-  
տնտեսության հիմքն է կազմում: Մինչև ցանք-  
սերի տարածությունը չավելանա, գյուղատնտեսությունը չի  
կարող առաջադիմել:

Այստեղ պետք է մասնանշենք մի ուրախալի հանգամանք.  
ցանքսերի տարածությունը 1923 տնտեսական տարում նախորդ  
տարվա համեմատությամբ նկատելի չափով ավելացել է (18<sup>0</sup>/<sub>0</sub>):

Այժմ ցանքսերի ամբողջ տարածությունը կազմում է 70  
միլիոն դեսիատին: Յեթե վերցնենք մինչպատերազմյան շրջանի  
ցանքսերի տարածությունը՝ 87 միլիոն դեսիատին, ապա կտես-  
նենք, վոր 1923 թվին մենք հասել ենք մինչպատերազմյան  
ցանքսերի տարածության 73<sup>0</sup>/<sub>0</sub>-ին:

Ինչպես տեսնում եք, մենք դեռ չենք հասել մինչպատե-  
րազմյան նորմային, բայց մենք շատ հեռու յենք գնացել ցանք-  
սերի այն տարածությունից, վոր մենք ունեյինք 1921 թվին՝  
ընդամենը 50 միլիոն դեսիատին: 1924 թ. ևս ցանքսերի տա-  
րածությունը մի քիչ ավելացավ, հասնելով մինչպատերազմյան  
տարածության 85<sup>0</sup>/<sub>0</sub>:

Գյուղատնտեսա-  
կան մթերքների  
գների իջեցու-  
մը.

Այս ամենը շատ խոշոր նվաճում է, յե-  
թե ինկատի առնենք մեր ծանր պայմանները՝  
ավերիչ պատերազմները և Մերձ-Վոլգայի ան-  
ուելի սովը: Անցյալ տարի մեր գյուղատնտե-  
սությունը մի նոր հարված ևս ստացավ— դա հացի գների ան-  
կումն էր: Մեղանում լերկյուղ կար, իսկ մեր թշնամիները մեծ  
հույսեր ունեյին, թե գյուղացին այլևս խթան չի ունենա իր  
տնտեսությունը բարձրացնելու, քանի վոր նրա դառն աշխա-  
տանքը շատ եժան է գնահատվում, այնքան եժան, վոր գյու-  
ղացին վոչինչ չի կարողանում գնել: Սակայն գյուղացիությունը  
հուշակավոր «մկրատին»՝ արդյունաբերական և գյուղատնտե-  
սական մթերքների գների տարբերությանը պատասխանեց  
ցանքսերի տարածությունն ավելի ընդարձակելով: Նա այսպես  
եր մտածում. «դեռ հացը եժան է, բայց ավելի լավ է եժան  
հաց շատ ունենալ, ամբացնել տնտեսությունը, զարգացնել

անասնապահությունը, քան կրճատել ցանքսերը և մշտապես  
յենթակա լինել սովի արհավիրքներին»:

Հասուկ մեա-  
կույթների ցանք-  
սերը.

Պետք է նկատել, վոր ցանքսերի ավե-  
լացման հետ բարվոքվել է նաև վաճառելի հա-  
ցաբույսերի և ինտենսիվ մշակույթների վի-  
ճակը, այն մշակույթների, վորոնք լավ զին ունեն շուկայում  
և եքսպորտի (արտահանության) ապրանքներ են: Այդպիսի ար-  
ժեքավոր մշակույթներ են շաքարա-ճակնդեղը, արևածաղիկը,  
վուշը, կանեփը, բամբակը, ծխախոտը և այլն:

Մենք տեսնում ենք, վոր յեթե 1922 թվին հատուկ մշա-  
կույթները բռնում էյին 4,837,000 դեսիատին տարածություն,  
1923 թվին արդեն ունենք այդպիսի մշակույթների 5,787,000  
դեսիատին ցանքս. նշանակում է՝ նախորդ տարվա համեմատու-  
թյամբ 20<sup>0</sup>/<sub>0</sub> ցանքան ավելացել է:

Իսկ առանձին մշակույթների նկատմամբ այդ ավելացումն  
ավելի մեծ է. որինակ՝ արևածաղկի ցանքսն անցել է նույն-  
իսկ մինչպատերազմյան նորմայից: Արևածաղկի ցանքսը հասել  
է 222<sup>0</sup>/<sub>0</sub>:

Միաժամանակ զարգանում են նաև մյուս հատուկ մշա-  
կույթները:

1923 թվին վուշի թելիկների բերքը հավասար եր 12 մի-  
լիոն փթի, վորը կազմում է մինչպատերազմյան քանակի մի  
յերրորդ մասը: Կանեփի թելիկների բերքը նույն թվին հասավ  
12 միլիոն փթի, այնինչ պատերազմից առաջ նրա բերքը 17  
միլիոն փութ եր, այնպես վոր կանեփի կողմից մենք համարյա  
հասել ենք մինչպատերազմյան նորմային:

Յեթե վերցնենք ձիթատու սերմերի բերքի թվերը, հետե-  
վյալ պատկերը կստանանք.

	Պատերգամից առաջ փութ.	1923 թ. փութ.
Վուշի սերմ	32 600 000	17.000 000, միայն 2 անգամ պակաս
Կանեփի սերմ	16 800.000	16.600.000, համարյա հավասար
Արևածաղիկ	53 300 000	90 900.000, չափազանց ավել
Ընդամենը*	102 700 000	124 500.000

\* Թվերը վերցված են ЦСУ-ից (Կենտ. վիճ. վար.) և պրոֆ.  
Ողանովիկու «Сельск. хоз. в 1922 г. и перспективы на 1924» հոգով.  
«Жизнь» № 149.



Այսպիսով այս բնագավառում մենք առաջ ենք դնացել մինչպատերազմյան շրջանից:

**Կարտոֆիլի ցանքները.** Գյուղատնտեսությունը բարձրացման մեջ շատ խոշոր նշանակություն ունի կարտոֆիլի մշակույթը: Կարտոֆիլը, ինչպես հայտնի յե, միայն մարդու գործածություն համար չէ, նա մեր անասնաբուծության, հատկապես խոզաբուծության զարգացման համար անհրաժեշտ էլական մթերքներից է: Ել չենք խոսում այն մասին, վոր կարտոֆիլից արտագրում են ոսլա, սպիրտ և այլն:

1923 թվին մենք ունեյինք 1.691 000.000 փուլ կարտոֆիլ, այսինքն մինչպատերազմյան քանակի  $\frac{2}{3}$ -ից ավելի:

**Շաբարա-ճակըն-զեղի ցանքները.** Շաբարի ճակնդեղի բերքը տվեց 1923 թ. 132 միլիոն փուլ 1922 թվի 92 միլ. զիմաց:

Բայց մենք դեռ շատ հեռու յենք մինչպատերազմյան շրջանից. պատերազմից առաջ շաբարի ճակնդեղի բերքը կազմում էր մոտ 600 միլ. փուլ:

**Քամբակի ցանքները.** Քամբակը խոշոր նշանակություն ունի անկվածային (текстильное) արդյունաբերության զարգացման համար. և այս մշակույթը շատերին է հետաքրքրում:

Ի՞նչ ունենք մենք այս բնագավառում: Անցած տնտեսական տարում մենք հավաքել ենք 2 500 000 փ. գտած բամբակ, կամ 10 միլիոն փուլ հուժ բամբակ: Մինչ պատերազմը մենք ունեյինք մոտ 50 - 60 միլիոն փուլ հուժ բամբակ, այսինքն 6 անգամ ավելի, քան 1923 թվին:

Յեթե մեզ գյուղացին հարց տա, թե ինչու կտորեղենը թանգ է, կարելի չէ նրան այս թվերով պատասխանել, վոր մենք դեռ չենք կարողանում ամբողջապես բանեցնել մեր անկվածային գործարանները: Կտորեղենն այն ժամանակ կարժանանա, յերբ բամբակի ցանքսերն ավելանան, ու անկվածային ֆաբրիկաների արտադրությունը բարձրանա: Մի ժամանակ բամբակի գործը լսիտ ծանր զրուծյան մեջ էր. Թուրքմենստանի, Ուզբեկստանի գյուղացիները չեյին կարողանում լայն չափով բամբակաբուծությունը զբաղվել. հարկադրված էյին թողնել, վորովհետև սոված էյին: Իսկ մենք չկարողացանք նրանց հաց

տալ, վորովհետև ինքներս սոված էյինք: Յերբ մեր սովը անցավ, և մենք սկսեցինք հաց մատակարարել նրանց, ժողովուրդը նորից անցավ բամբակի մշակույթին: Յեվ սա ավելի ձեռնտու է, վորովհետև բամբակաբուծությունն այդ շրջանում շատ ավելի արդյունավետ է, քան հացահատիկների մշակույթը:

**Անասնաբուծությունը:** Յեթե անցնենք այժմ անասնապահության, կտեսնենք, վոր զրուծյունն անցյալ տարիների համեմատությամբ այստեղ ևս բավական լավացել է: Իմպերիալիստական, քաղաքացիական կռիվների ժամանակ մեր անասնապահությունը սոսկալի հարված կրեց, անասունների քանակը խոշոր չափով պակասեց:

1923 թվից մեր անասնապահությունը նորից սկսում է վերականգնվել: Յեթե մինչհեղափոխական շրջանի - 1916 թվի քանակն ընդունենք 100, ապա 1922, 1923 թ. թ. կունենանք հետևյալ քանակը: Այնտեղ, ուր 1916 թ. 100 էր,

	1922 թ.	1923 թ.
Աշխատող ձիեր	64,9	68,2
Քուռակներ 1 տար.	50,0	50,0
Քուռակներ . . . .	41,2	50,0
Բոլոր ձիերը . . . .	60,5	64,0
Յեղներ (волы.) . .	62,9	65,7
2 տ. վեր յեղներ . .	57,1	42,9
Կովեր . . . . .	81,2	90,2
Մատղաղ անաս. . .	45,8	56,3
Հորթեր . . . . .	55,6	73,2

Յեթե վերցնենք խոշոր անասունների ընդհանուր քանակը, կտեսնենք, վոր 1916 թ. համեմատությամբ ունենք 1922 թ. 65,7% և 1923 թ. - 76,6%:

	1922 թ.	1923 թ.
Վաշխար. ու այծ.	49,2	66,9
Խոզեր . . . . .	39,5	46,7

Իսկ յեթե բոլոր անասունները վերածենք խոշոր յեղերավորի, ապա կստանանք՝ 1916 թ. - 100, 1922-ին - 62,9, 1923-ին - 71,9: Ինչպես տեսնում եք, ամեն տեղ զրուծյունը

լավացել է, միայն չեզներն ավելի քիչ են, քան 1922 թվին:  
1923 թ. ընդամենը ունեյինք.

Ձի . . . . . 19.700.000. Վոչխար-այծ 56.500 000  
Սոշոր յեղջ. անաս. 38.600.000. Սոզ . . . . . 9.100.000

Սա փոքր քանակութիւնն չէ: Բայց չպետք է մոռանալ, վոր մեր յերկիրը շատ մեծ է, մենք 20 միլիոնից ավելի գյուղական տնտեսութիւններ ունենք. մեր ունեցած անասունները հերիք չեն տնտեսութիւնն այդ քանակին:

Յեթե հաշվենք, թե 1923 թվին ինչքան յեկամուտ ենք ունեցել գյուղատնտեսութիւնից, կստանանք հետևյալ թվերը.

Հացահատիկներից . . . . .	2.191.000.000	»
Կարտոֆիլից և շաք. ճակնդեղից . . . . .	226.000.000	»
Թելանյութային (վուշի, կանեփի) մշակույթից . . . . .	91.000.000	»
Ձիթատու (վուշի, կանեփի, արևածաղկի) բույս. . . . .	177.000.000	»
Արտաներից (գուրս յեկած անասունների կերը) և կերի խոտերից . . . . .	206.000.000	»
Ծխախոտից, բանջարանոցներից . . . . .	440.000.000	»
Անասուններից և թռչուններից . . . . .	1.325.000.000	»
Այգիներից և խաղողից . . . . .	116.000.000	»

Ընդամենը 4.772 000 000 ուրբլի:

Յեթե սրան ավելացնենք Միջին Ա. Իսայի, Հեռավոր Արեւելքի շրջանի և Անդրկովկասի յեկամուտները, ապա ամբողջ Ս. Միութիւնն գյուղատնտեսութիւնից ստացած յեկամուտը հավասար կլինի 5 205.000.000 ուրբլու:

Ի՞նչ են ներկայացնում այս թվերը մինչպատերազմյան յեկամուտների նկատմամբ:

1911—1915 տարիների շրջանում Ս. Միութիւնն ներկա սահմաններում տարեկան ընդհանուր յեկամուտը հավասար էր մոտ 8 միլիարդ ուրբլու: Ինչպես տեսնում եք, տարբերութիւնը խիստ մեծ է: Մենք դեռ չենք հասել մինչպատերազմյան դրութիւնն: Մեր հսկայական յերկրի համեմատութիւնով

\* Տես. «Экономическая жизнь» № 149 «Сельск хоз. в 1923 г.»

այսպիսի չնչին յեկամուտի պատճառը պետք է վորոնել մեր գյուղատնտեսութիւնն ընդհանուր հետամնացութիւնն մեջ:

Մեր գյուղատնտեսութիւնն վերականգնման յենդիրը փակելու համար անհրաժեշտ է հիշել, թե 100 դեսիատին ցանքսին ինչքան յերկրագործական մեքենա և գործիք է ընկնում: Մենք

կրերենք միայն 3 տարվա թվերը. 1910 թ., հետո 1920 թ.՝ համաշխարհային և քաղաքացիական ավերիչ պատերազմների անմիջապես հաջորդող տարին: և ապա 1923 թիվը, յերբ մենք սկսեցինք վտարի կանգնել և վերականգնել մեր տնտեսութիւնը: 100 դեսիատին ցանքին ընկնում է՝

Շ Ր Ձ Ա Ն Ն Ե Ր	1910 թ.			1920 թ.			1923 թ.		
	Ա. ր. ր.	Գութան	Հավարող մեքենաներ	Ա. ր. ր.	Գութան	Հավարող մեքենաներ	Ա. ր. ր.	Գութան	Հավարող մեքենաներ
Վոչ-անասնոցի շերտ									
Ա. ր. ր. մ. ր. ր.	9, 1	16, 4	0, 0	6, 6	24, 4	0, 2	4, 1	14, 5	0, 1
Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.	21, 2	10, 9	0, 1	22, 9	23, 5	0, 7	14, 1	14, 5	0, 4
Հյուսիս-Արևելք	15, 8	5, 0	0, 8	14, 7	6, 7	1, 8	13, 7	6, 3	1, 7
Սեյտանոցի շերտ									
Ա. ր. ր. մ. ր. ր.	—	—	—	—	—	—	—	—	—
Կ. Կ. Կ. Կ. Կ. Կ.	13, 2	5, 0	0, 4	12, 4	8, 1	1, 0	10, 0	6, 6	0, 8
Հարավ-Արևելք	1, 5	5, 4	2, 5	1, 6	7, 5	3, 3	1, 4	6, 3	3, 6
Ռ. Ս. Ֆ. Ս. Ն. Ն. Ս. Իսայի-կան մասը.	5, 6	6, 7	1, 8	3, 4	10, 6	5, 6	4, 5	14, 0	7, 5

Ընդամ. Ռ. Ս. Ֆ. Ս. Ն. Ն. \* 10, 3 | 7, 0 | 1, 1 | 9, 6 | 11, 2 | 2, 6 | 8, 2 | 9, 6 | 2, 3

Մենք տեսնում ենք, վոր այս բնագավառում ևս ունենք շատ թերութիւններ: Պատերազմի ընթացքում մենք չկարողացանք ամբողջապես բանեցնել մեր մեքենակառույց գործարանները: Այս—մի կողմից: Մյուս կողմից մենք հնարավորութիւն չունեցանք արտասահմանից մեքենաներ բերելու. վոչ միջոցներ ունեյինք, վոչ էլ տալիս էին: Այժմ կարգավորվում է այդ գործը: Այս տարի մեր մեքենակառույց գործարաններին պատվիրված են 27 միլիոն ուրբլու յերկրագործական գործիքներ, մեքենաներ: Պահանջի հետ համեմատած, իհարկե, սա շատ քիչ է. մինչպատերազմյան շրջանի պահանջը հասնում էր 150 միլիոն ուրբլու:

\* Տես «Перспективы с. хоз.»

Մենք կարողացել ենք պատվիրել միայն 27 միլիոնի մեքենաներ ու գործիքներ. իսկ պետգյուղպահեստների միջոցով գյուղացիությունը մաս-մաս վճարելու պայմանով վաճառել ենք մինչպատերազմյան զներով 30 միլիոն ուղբուլ: Այդ պահեստներն իրենց նահանգային, շրջանային և տեղական բաժանմունքների միջոցով մեքենաներ վաճառում են ընկերություններին 4 տարվա ընթացքում վճարելու պայմանով, ինչպես նաև առանձին անհատներին և կոոպերատիվներին:

Խորհրդային իշխանությունն ամեն միջոց ի խառնուրդումն ձեռք է առնում չքավոր գյուղացիությունը օգնություն ցույց տալու համար: Այս պարտականությունը միայն Հողօրդկոմատի վրա չի ընկնում: Մեծ սխալ կլինի, յեթե այս գործի ծանրությունը թողնենք միայն Հողօրդկոմատի վրա: Յեթե մեզանից ամեն մեկը՝ բանվոր, կուրսանտ, կարմիր-բանակային, ծառայող — չմտածի գյուղացիության մասին, Հողօրդկոմատը մենակ վոչինչ չի կարող անել: Այստեղ անհրաժեշտ է մասսայական աշակցություն, ներգործություն գյուղացու անտեսություն վրա:

Մենք կրեքենք մի շարք թվեր, վորոնք ցույց են տալիս, թե կառավարությունը փոխարինաբար ինչքան սերմացու յե բաց թողել գյուղացիությունը:

6 տարվա ընթացքում փոխ և տված

1919 թ. գարնանացան	3.639.000 փ.,	աշնանացան	250.000 փ.
1920 »	5.317.000 »	»	574.000 »
1921 »	39.705.000 »	»	12 853.000 »
1922 »	37.966.000 »	»	15.160.000 »
1923 »	22.448.000 »	»	10.288.000 »
1924 »	16.000.000 »	»	—

1924 թ. փոխարինաբար բաց թողած սերմացուի 34,6% -ը ցորեն էր, 43,6% -ը՝ վարսակ, 13,4% -ը՝ գարի, իսկ մնացածը՝ վուշ, կանեփ, արևածաղիկ և այլն:

1924 թվի փոխ տված գարնանացան սերմացուի 11.180.000 փուլը հավաքված է ի դիմաց այն սերմացուի, վոր կառա-

վարությունը 1923 թվին փոխ և տվել պետական սերմ ֆոնդից. կառավարությունը 2.150.000 փուլը գնել է իր միջոցներով. 1.004.000 փուլն ստացվել է Սիբիրի և Կիրըշվանի պետական ռեսսուրսներից և 1 766 000 փուլը Գյուղատնտեսություն նպաստող կոմիտեյի ֆոնդից:

Եճ, Բան հող ու-  
ճ Եճ Խ ո ռ Ի Ե Ղ .  
գյուղացի ու-  
բյուլը, Խորհր-  
դային ճեեսու-  
բյուլները (СОВ-  
ХОЗ) չեվ կոլեկ-  
տիվ ց ճ Ե ս ու-  
բյուլները (КОЛ-  
ХОЗ).

Հեղափոխությունը հողը խլեց կալվածատերերից և նրա մեծ մասը հանձնեց գյուղացիությանը: Այժմ մեր հողերի 96% -ը գյուղացիության ձեռքին է, 3% -ը՝ խորհրդային և 1% -ը՝ կոլեկտիվ անտեսությունների տրամադրության տակ:

Չնայած այդ հանգամանքին, դարձյալ հողը քիչ է, — ինչ շրջան էլ վոր վերցնենք, սակավահողությունից են գանգատվում՝ Մոսկվայի, Տամբովի և այլ նահանգները, Անդրկովկասը և նույնիսկ Սիբիրը: Մինչդեռ մենք ունենք 2 միլիարդ դեսիատին հող, և դրա շատ չնչին մասն է մշակվում: ՌՍՖՍՀ-ի 50 չեվրոպական նահանգներում միայն 17% -ն է մշակված հող, Արևմտյան Սիբիրում — 1% -ը, Արևելյան Սիբիրում — միայն 3% -ը: Նույնը պետք է ասել նաև Անդրկովկասի մասին:

Ինչպես կովել սակավահողություն գեմ: Յերկու ճանապարհ կա. առաջին՝ անպետք հողերը — ճահճոտ, անջրդի և այլն, համապատասխան միջոցներ ձեռք առնելով (ճահիճները չորացնելով, ջրանցքներ անցկացնելով և այլն) մշակելի դարձնել, և յերկրորդ՝ դարգացնել գյուղատնտեսությունը, վորպեսզի, ինչպես արդեն խոսվեց այդ մասին, միևնույն տարածությունից ավելի յեկամուտ ստացվի: Այդ յերկու ուղղությունը էլ աշխատում է մեր իշխանությունը: Բայց, ինչպես արդեն ասացինք, դա բավական չէ. այդ ուղղությունը պետք է աշխատեն ամենքը, վորպեսզի շոշափելի հետևանքների հասնենք: 10, 20, 30 տրնտեսություններ կարող են միանալ և կազմել մեխիորատիվ ընկերություններ և Հողօրդկոմատի տեխնիկական և նյութական աշակցությունը այս կամ այն գործը զլուխ բերել՝ ճահիճ չորացնել, ջրանցք անցկացնել և այլն:

Ըստ Պ. Գուրովի

Գյուղատնտեսության բնագավառում  
խիստ վորոշ նկատելի յե վերականգնման պրո-  
ցեսսը, Հետևյալ տեղեկությունները ապացույց  
են դրան.

1. Ցանքսերի տարածությունը (չհաշված Հեռավոր Արևել-  
քի, Միջին Ասիական և Անդրկովկասի շրջանները), վոր 1916  
թվին կազմում եր 86,5 միլ. դեսիատին, 1922 թվին, մեծ սո-  
վից հետո, իջավ մինչև 58,7 միլ. դես., ապա 1923 թվին հաս-  
նում ե 69,9 միլ. դես., իսկ 1924 թ. մինչև 75,9 միլիոն դե-  
սիատին\*։ Առանձին ուայոններ (որինակ Ուկրաինան) համարյա  
հասել են արդեն 1916 թվի բերքին։

2 Նկատելի յե գյուղատնտեսական տեխնիկական և ապ-  
րանքային մշակույթների արագ աճումը։ Շաքարի ձախնդեղի  
ցանքսը 1924 թվին նախորդ տարվա համեմատությամբ ավե-  
լացել ե 42% (226 հազ. դեսիատինից հասել ե մինչև 320  
հազ. դես.։ Պատերազմից առաջ 574 հազ. դես.)։ վուշը—25%  
(845 հազ. դեսիատինից մինչև 1060 հազ. դես.։ 1916 թ. 1383  
հազ. դեսիատին եր)։ կանեփը—21% (530 հազ. դեսիատինից—  
639 հազ. դես.։ 1916 թ. 545 հազ. դես. եր)։ բամբակի ցանք-  
սը—134% (194 հազ. դես. մինչև 455 հազ. դես.։ 1916 թ.  
774 հազ. դեսիատին եր) և այլն։ Գարու և ցորենի ցանքսերի  
տարածությունը վերջին 3 տարում անընդհատ մեծանում ե  
(100 դես. ցանքսին 1922 թ. ընկնում եր 9,3 դես. գարնա-  
նացան, 1923 թ.—12,0, 1924 թվին—14,8 դեսիատին)։

3. Այսպիսի աճող ընթացք ունի նաև անասնապահությունը։  
Չիբրի քանակը, վոր 1916 թ. ՌՍՖՍՀ-ում, ԲՍՍՀ-ում և  
ՈւՍՍՀ-ում հավասար եր 29,8 միլիոնի, 1922 թ. 20,2 միլիոն  
եր, 1923 թ.—20,3 միլ. և 1924 թ.—արդեն 22,2 միլիոն։ Խո-  
շոր յեղջերավոր անասունները՝ նույն տարիներում, 48,4 մի-  
լիոն, 35,0 միլ., 39,2 միլ. և 46,3 միլ. գլուխ. խոզերը—18,6  
միլ., 8,6 միլ., 9,1 միլ. և 16,8 միլիոն։

Այստեղից պարզ ե, թե ինչպես արագ զարգանում ե գյուղ-  
ատնտեսությունը։

\* Թվերը վերցված են ԱՄՆ-ից (Կենտ. Վիճ. Վարչությունից)։

Սակայն գյուղատնտեսության զարգացման մեջ նկատելի  
յեն նաև բացասական մոմենտներ։ Այդ բանը նկատելի յե հատ-  
կապես հացահատիկային տնտեսության մեջ. այդ բնագավա-  
ռում աճումը վորոշ չափով կանգ ե առել, նույնիսկ յետ գնա-  
ցել։ Այսպես, Ֆինիստիկոմի տեղեկությունների համաձայն, հա-  
ցահատիկների բերքը 1922 թվին կազմում եր 3 096,6 միլ.  
փութ, 1923 թ.—2950,3 միլ. փ. և 1924 թ.—2622,8 միլ.  
փութ։ Դրան պետք ե ավելացնել նաև զանազան ուայոնների  
բերքի բազմազանությունը։ Սովի յենթակա ուայոններում խիստ  
պակասում ե գնորդական ընդունակությունը։ Այսպիսով առաջ  
ե գալիս գնորդական ընդունակությունների տեղաշարժումը.  
մի հանգամանք, վոր արդյունաբերության համար ստեղծում ե  
բարդ դրություն։

Այսպիսով, գյուղատնտեսական բազան, չնայած մասնա-  
կի բերքի, ընդարձակվում ե նաև այս տարի։ Վերականգնման  
պրոցեսսը բավական ինտենսիվ շարունակվում ե։ Անբերքիու-  
թյունը լոկ դանդաղեցրեց տեմպը և բարդացրեց ընդհանուր  
դրությունը։ Իսկ յեթե հաշվի առնենք հացի գների բարձրա-  
ցումը, ապա կարելի յե ամենայն վստահությամբ պնդել, վոր  
ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության ընդհանուր վիճակը լիպպես ար-  
դարացնում ե արդյունաբերության հետագա ընդարձակման  
նկատմամբ մեր բռնած ուղին։

ՀԱՏ Գ. ԿՐՈՒՄԻՆԻ

### Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչ դրություն մեջ և Խ. Միություն գյուղատնտեսության ընդհանուր վիճակը։
2. Վորոնք են նրա բարձրագույն պատճառները։
3. Անասնապահության դերը. նրա վիճակը պատերազմից առաջ ու հետո, նրա  
վերելքը։
4. Կարմեցիք «կոր» (кривая) դիագրամաներ այս մասին։
5. Ի՞նչ վիճակի մեջ և անասնապահությունը ձեր գյուղում, շրջանում (թվական  
տվյալներով)։ Քոչը մեզանում, նրա ծագումը, հետևանքները։
6. Յերկրագործության վիճակը, նրա անկումն ու վերելքը թվական տվյալնե-  
րով (ինվենտարի քանակը, ցանքսերի տարածությունը)։
7. Ի՞նչ նշանակություն ունեն տեխնիկական մշակույթները։
8. Ի՞նչ եր նրանց դրությունը պատերազմից ու ՆեՊ-ից առաջ։

9. նրանց վերականգնումը:
10. Ի՞նչ տեխնիկական մշակույթներ կան Անդրկովկասում. նրանց վիճակը խորհրդայնացումից առաջ և հիմա:
11. Ի՞նչ փոփոխությունների յենթարկվեց գյուղական բնակչության կազմը առհասարակ և ձեր գյուղում. ի՞նչ եր դրա պատճառը:
12. Վորոնք են սովի, յերաշտի պատճառները:
13. Ի՞նչպես պայքարել սովի, յերաշտի դեմ:
14. Համեմատեցեք մեր և ոտար յերկրների բերքատվությունը:
15. Ի՞նչ դեր խաղաց նոր տնտեսական քաղաքականությունը (նեՊ-ը) գյուղատնտեսության վերականգնման նկատմամբ:
16. Ի՞նչ տեղ է ընդունում գյուղատնտեսության ընդհանուր յեկամուտը մեր տնտեսության մեջ:
17. Ի՞նչ չափով և ապահովված մեր գյուղացին յերկրագործական մեքենաներով, գործիքներով:
18. Ոգնում է ՈՍ. Իշխանությունը գյուղին և ի՞նչ չափով:
19. Ի՞նչ տեղ են ընդունում խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները մեր տնտեսության մեջ:

## Յ Ա Ն Կ

Ա.


1. Ուսումնասիրության պլանը. 2. Անասունների կրճատումը. 3. Անասունների տերը մեր տնտեսության մեջ. 4. Անասնապահությունը պատերազմից առաջ. 5. Յերկրագործական մեռյալ ինվենտարի կրճատումը. 6. Յերկրագործական վատ գործիքներ. 7. Յանքսերի տարածության կրճատումը. 8. Տեխնիկական մշակույթների կրճատումը. 9. Հողի մշակման յեղանակների վատթարացումը. 10. Բերքատվությունը. 11. Հացի ընդհանուր բերքի կրճատումը. 12. Գյուղական բնակչության կազմի փոփոխությունը. 13. Յերաշտի և սովի պատճառները. 14. Գյուղատնտեսության համաշխարհային ճգնաժամը:

Բ.

### ՈՍ.Հ.Մ.-ի ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1. Յանքսերի տարածությունը. 2. Գյուղատնտեսական մթերքների գների իջեցումը. 3. Հատուկ մշակույթների ցանքսերը. 4. Կարտոֆիլի ցանքսերը. 5. Շաքարածախնդեղի ցանքսերը. 6. Բամբակի ցանքսերը. 7. Անասնապահությունը. 8. Գյուղատնտեսության ընդհանուր յեկամուտը. 9. Յերկրագործական մեքենաների և գործիքների քանակը. 10. ՈՍ. Իշխան, ողնում և չքալոր գյուղացիությունը. 11. Գյուղացիության և պետ. տնտես. և կլլ. տնտես. հողի քանակը. 12. Գյուղատնտեսությունը 1924 թվին:







ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.

«Ազգային գրադարան»



NL0282104

15006